

Նարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան



Նկարիչ՝ Տիգրան Ամյան

Նկարազարդ ուսուցողական
մատենաշար 3-6 տարեկան
երեխաների համար

ԼԵՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայաստանի Հանրապետություն
2013

ԳԻՐԲ 5


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	3
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	4
ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ, ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ	5
ԿՇԵՈՔ ԵՎ ՄԱՐՄԻ ԶԱՆԳԱԾ	8
ՏՐԱՆՍՊՈՐՏ	10
«ԿԵՆԴԱՆԻ» ՏՐԱՆՍՊՈՐՏ	12
ՀՈՐԻՉՈՆԻ ԿՈՂԱԵՐԸ	13
ԻՆՉՈՐՎ ԿԱՐԵՆԻ Է ԲԱՐՉՐԱՆԱԼ ԵՐԿԻՔ	14
ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	16
ԱՍՏԳԵՐ	17
ՑԻԵՉԵՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ	18
ԵՐԿՐԻ ՄԱՅՐՑԱՄԱՔՆԵՐԸ	20
ԿՂԶԻ, ԹԵՐԱԿՂԶԻ	21
ԵՐԿՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	22
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ	23
ՄԹՆՈՒՄ	24
ԶԱՅՆ	25
ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐ	26
ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ	28
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԾԱՆՐԱՔԱՇԵՐԸ	30
ԲԱՐՉՐԱՀԱՄԱԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ	32
ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ	33
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀՄԿԱՆԵՐԸ ԵՎ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ...	34
ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀՄԿԱՆԵՐԸ	35
ՈՐՔԱՆ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԲՈՒՅԱԵՐԸ	36
ՄԱՐՉԵՔ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	38
ԽԱՂ «ԼԱՐԻՐԻՆՊՈՍ»	40
ԱՄԵՆԱՐԱԳԱՎԱԶԸ	41
ՇԱՐՃՈՒՄ	42
ԻՆՉ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ	44
ԳՏԻՐ ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԸ	46

**ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ,
ԼՍՅՆՈՒԹՅՈՒՆ,
ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ**

Ժամացույցին ծանոթացանք, իսկ հիմա սովորենք չափումներ անել: Նայիր այս լուցկու տուփին և ցույց տուր դրա երկարությունը, լայնությունն ու բարձրությունը:



Այժմ ե՛կ մի քիչ խաղանք ու միաժամանակ չափումներ անենք:

Խաղ առաջին: Կապույտ ու կարմիր խաղալիքները քսո՞ւն են, իսկ մնացածը՝ ի՞նչ: Ի՞նչ են կարծում, կարո՞ղ են կառուցել այնպիսի աշտարակ, որն իմ աշտարակից ավելի բարձր լինի:



<իմա անցնենք մյուս խաղին: Տեսնո՞ւմ ես այս երկու պարանը: Կարո՞ղ ես աչքաչափով որոշել, թե դրանցից որն է ավելի երկար: Դժվար է, չէ՞: Ավելի միտ կլինի, եթե վերցնենք քանոնը, չափենք յուրաքանչյուր պարանի երկարությունը և հետո համեմատենք ստացված թվերը:



Այժմ ուշադիր նայիր այս երկու ժապավենին: Ո՞րն է դրանցից ավելի լայն: Ի՞նձ թվում է՝ կարմիրը: Անի՞մ համաձայն չէ, իսկ դո՞ւ...



Հեռավորությունը չափում են միլիմետրերով (մմ), սանտիմետրերով (սմ), մետրերով (մ), կիլոմետրերով (կմ): Ահա մի քանի օրինակ. լուսկու հատիկի լայնությունը մոտ 2-3 մմ է, իսկ երկարությունը՝ 5սմ, ավտոբուսի բարձրությունը մոտ 3 մ է, իսկ երկարությունը՝ 4-5 մ: Կիլոմետրերով չափում են, օրինակ, գյուղից քաղաք հեռավորությունը և այլն:

Միլիմետրը, սանտիմետրը, մետրն ու կիլոմետրը համարվում են երկարության չափման միավորներ: Փորձենք դասավորել դրանք փոքրից մեծ:

Ես ի՞նչ այս նկարներին և պատկերացրո՞ւր. դրանց բոլորի իրական չափերը: Ի՞նչ ես կարծում, երկարության ո՞ր չափման միավորն է կիրառելի յուրաքանչյուր պատկերի համար:

1 մմ 1 սմ 1 մ 1 կմ



բրնձի հատիկ
հասարակած



մատիտ



ավտոմեքենա

Մտածիր ու ասա՝ կարո՞ղ են այստեղ պատկերված երեխաներն ուղիղ կանգնել այս տնակի մեջ:







7 

ԿՇԵՈՋ ԵՎ ՄԱՐՄԵՆԻ ՁՍԼԳՎԱԾ

Նայիր այստեղ պատկերված կշեռքին ու կշռաքարերին: Կարող ես կահել, թե ինչպես է աշխատում այս կշեռքը և ի՞նչ նպատակով է օգտագործվում:

Կշեռք հաճախ բժիշկներին են օգտագործում: Կշեռքներ կան խանութներում, օդանավակայաններում: Օդանավ մտնելուց առաջ կշռում են բոլոր ուղևորների ծանրոցները, որովհետև չափից ավել ծանրաբեռնված օդանավը դժվար թե կարողանա օդ բարձրանալ: Մտածիր ու ասա՝ է՛լ ինչի համար է անհրաժեշտ կշեռքը:

Որևէ մարմին կշռելով՝ մենք որոշում ենք նրա զանգվածը:

Տես, թե ինչպես են դասավորված զանգվածի չափման միավորները փոքրից մեծ:


1 գրամ (գր)

1 կիլոգրամ (կգ)

1 տոննա (տ)



Սև ագռավը կշռում է մոտ 1 կիլոգրամ:



Սպիտակ արջի արուն կշռում է մոտ 1 տոննա:

